

յութիւնը և ս սեղանը վարագուրով ծածկում է իրրե նշան դրախտի դռներն այն մեղաւորի առջև փակելու, որին ապա իւր խաչի մահով սրբեց, արդարացուց մեր Փրկիչը:

Այսուհետեւ գալիս է քառասնորդական պահքը, որ իւր հետ րերում է ապաշխառութեան օրերը. ապաշխառութեան, որ այս շատ պէտք է ամեն տեսակ մեղաւորի համար, բայց առաւել նոցաւ, որոնք դրժել են սուրբ ուխտին, դաւել են ընկերին, նենդել են սրբութեան գաղափարն, և Յուդայի ու Ղասակի քայլերով առաջնորդուած՝ պատճառ են եղել ընկերի կորստեանը կամ ապականութեանը:

Մի գուցէ երեխաններին ևս քառասնորդական պահուց խորհուրդն յիշեցնելու նպատակով աւանդութիւնն յօրինել է այն հրեշնման մրմռացը որ մեծ պասի հենց առաջն օրը կախում են իւրաքանչիւր տան մէջ երդիկից: Այդ մրմռաս ասածն ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի սոխի զլուխ վրան շրջանաձեւ եօթըն հատ փետուր ցցուած մեծ պասի եօթն շաբաթների թուով (տեղուղ նորան ասում են ակլատիզ, ախողջ): Իւրաքանչիւր շաբաթ հանում են նորա մի փետուրը, մինչեւ որ իվրջայ Ս. Զատկի շաբաթին վար են առնում և սոխը Վայ, որ իւր ուխտը քանդէ և մեծ պասը խոռէ, երդիկից մի մեծ քար կընկնի այն ուխտագրուժի զլախին, այսպէս են բացատրում մրմռասի ահաւոր նշանակութիւնը մեր պառաւները:

Եթէ Մեհեկան ամսի երեխնօրեայ շրջանն աչքի առաջ ունենալով, մտարերենք, որ հեթանոսութեան ժամանակ այդ ամսին ամրողջապէս միհրական տօներին էր նուիրուած, որից և առել է իւր անունը այն ժամանակ շատ հասկանալի է թէ ինչո՞ւ համար քրիստոնէական ուխտապահ գնդի ներկայացուցիչ ների տօները միահաղոյն նոյն ամսի մի օրը չէ նշանակած, այլ բաժանած է չորս տեղ այն է Ս. Առովմեանց, Ս. Սահակայ Պարթեի, Ս. Ղեանդեանց և Ս. Վարդանանց, որոնց հետ միանում են և ժողովրդական հին յիշատակներն Առաջաւորաց պահքի և բարեկենդանի օրերում: Այդպէս և պէտք է լիներ. որովհ հետեւ մեհեկանն այլևս հեթանոսական տօների ամսիը լինել կարող չէր թէպէտեւ պահում:

Էր իւր անունն և քրիստոնէութեան ժամանակի Բնական է, որ ծէսերն և սովորութիւններն այնպէս դիւրութեամբ չեն ոչնչանում: Կրօնը թէ, և փոխուեցաւ, բայց ժողովրդի մէջ արմատ ձգած կրօնական, բարոյական գաղափարները կենդանի մնացին: Ոչ ոք չէր կարող նոցաւ մեռցնել քանի տակաւին կենդանի էր ինքը ժողովրդը: Եկեղեցին այդ շատ լաւ հասկացաւ, ուստի և հեռաւեսութեամբ և խնամքով նոյն ժամանակին յարմարեցուց այնպիսի սրբերի յիշատակութիւն, որոնք նոյն հին գաղափարի կենդանութիւնը պահպանում և արծարծում են ժողովրդի մէջ:

Կ. Կ.



## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐԱՆԻԿԱՆ

ԱԿՑԵԱԼ 1896 թ.-ը ՔՐԻՍ. ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ. ՀԱՄԱՐՈՒԹ ԸՆԴԱԿԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Քրիստոնէական տեսակէտից վերջին տարեցը ընդհանրապէս առած շատ աղքատ է միմիթարական երեսոյթներով, և ընդհանակառակին հարուստ գոնէ մեզ համար, տիսուր յիշատակներով:

Կաթոլիկ եկեղեցին այս անգամ ևս հանդէս բերաւ ընդարձակ ծրագիրներ և փայլուն ձեռնարկութիւններ, որոնց արդիւնքը սակայն մեծ մասամբ չնշն է և հետեւանքը անյաջող: — Հարեշստանի Մենալիք թագաւորի մօտ ուղարկած պատուիրակութիւնը գէպի Քրանսիական ազգը, նորա մկրտութեան 1400-ամեակի առթիւ, ցոյց տուած համակրութիւնը և այլ մանր մունք միջոցները, որոնցով պատպը աշխատում էր իւր քաղաքական ազգեցութիւնը զօրացնել և երեան էր հանում իւր իշխանասիրական ձգտումները, նոր ապացոյցներ բերին միայն թէ նա սիալ ճանապարհի վերայ է գտնուում՝ այն տեղ հեղինակութիւն և զօրութիւն որոնելով, ուր փաղուց անդարձ կերպով կորցրել է և երբէք ունեցած պէտք է լիներ: — Անգլիկան եկեղեցներ հետ միութիւն հաստատելու համար արած փորձերը, որոնք սկզբում ըստ երեսոյթին շատ բան էին խոստանում, անհետեանք անցան նոյնպէս և համոզեցին կրկին շատերին, որ հռոմէէական եկեղեցին իւր արդի կամակերպութեամբ անընդունակ է դժբաղդարար գաղափարական ձգտումների տեղի տալու, և միութեան վեմ գաղափարի վերայ միայն իւր նեղ աշխարհական տեսակէտից նայել կարող է:

Չատ անմիտթարական էր նաև Թրանկ-մասոնութեան գեմ վարած կռուի հետևանքը, որ ցոյց է տալիս, թէ արտաքուստ պիտիսի մեծ շուր և զօրութիւն ցոյց տուող Կաթոլիկ եկեղեցին, որչափ տկար է յաճախ բարոյապէս, և խղճալի կամ անվայել միջոցների ձեռնարկելու պատրաստ, երբ մի ներքին զօրեղ թշնամու չետ դործ ունի:

Սակայն ընդհանուր քրիստոնէութեան հետ առաւել կաթոլիկ աշխարհի բարոյական թուլութիւնը ոչ մի գործի մէջ այն գէս ակնյայտնի կերպով չի երևում, ինչպէս տառապեալ հայերին օգնելու գործում: Երդարև ինքը պապը կարեկցութեան զօրեղ նշաններ ցոյց տուաւ՝ ի միջի այլոց բաւական խոշոր մի գումար նուիրելով նոցա օգտին. այլև Կտալիայում ու Քրանիայում տեղ տեղ կաթոլիկ եկեղեցականների մէջ եռանդուն խօսողներ և գործողներ գտնուեցան. բայց ընդհանուր անտարբերութեան մօտ այդ մասնաւոր ջանքերի արժէքը չնչին էր: Եւ որ ամենացաւալին է՝ բաղմաթիւ նշաններ և փաստեր ստիպում են մեզ կասկածել, թէ այդ փոքրիկ ջանքերն իսկ առանց կողմնակի դիտումների, շահագիտական նպատակների չեն: Հռոմը, որ միշտ իմացել է Քրիստոսի անուանը արատ բերող միջոցներով Քրիստոսի հօտը մեծացնելու համար աշխատել, այժմ՝ ևս մտադիր չէ: ինչպէս երևում է, առիթը փախցնել՝ օգտուելու այն նեղ հանգամներից, որի մէջ գտնուում է տառապեալ հայ ժողովուրդը: Արդեօք ո՞րչափ թոյն կայ խառնած այն հացի մէջ, որ մի շարք ողորմած ձեռքեր մատակարում են այժմ սովորանշ տաճկահայերին: Չատ բան թագուն է կատարուում գեռ այսօր, բայց երկի շատ շանցած հրապարակ կելնէ: Երանի մեր կասկածներն ի զուր լինեին:

Օրթոգոքս եկեղեցուն պատկանող բալկաննան փոքր ազգութիւնները գրեթէ ամբողջ տարին ներքին վէճերով եին զբաղուած: Մեր գարի սկզբից ի վեր այդ ազգութիւնները, մէկը միւսի ետևելց քաղաքական անկախութիւն ձեռք բերելով, աշխատել են միաժամանակ անկախ ազգային եկեղեցիներ կազմակերպելու որից անընդհատ իրաւասութեան խնդիրներ են յառաջ եկել և շարունակուում են գեռ: Ամենից վաղ հելլէն եկեղեցին կազմակերպուեցաւ. բայց երկու հակառակ կուսակցութիւններ յառաջ եկան նորա մէջ, որոնցից պարբերաբար կամ մէկը կամ միւսն է յաղթող հանդիսանուում, և ըստ այնմ՝ եկեղեցին կամ աւելի աշխարհական իշխանութեան կողմն է թերուում և թագաւորի ազգեցութեանը ենթարկուում, կամ հոգեւոր իշխանութեան կողմը, և Տիեզ. Պատրիարքի հետ կապեր հաստատում, Թագաւորական տան գաստիարակ Պրոկոպիոս վարդապետի մետրոպոլիտ Ընտրութիւն յայտնի նշան էր, որ այժմ աշխարհական իշխանու-

թիւնը կրկին զօրեղ միջամտութիւն ունի եկ, գործերում:

Ամենից աւելի հոգ է պատճառում Տիեզերական Պատրիարքութեան Բոլղար եկեղեցին, որ գեռ իւր վերջնական կերպարանքը չէ սատցել և ձգուում է առ այժմ նորա իրաւասութան ներքոյ գտնուած թեմերից նորանոր նուածումներ անել: Եւսկիւրի աթոռակալութեան առթիւ ծագած վէճը երեկի մօտիկ ապագայրում իւր հետևանքները կունենայ և զիջողը կրկին Տիեզ. Պատրիարքը կիմի որի առանձին վիճակն ևս այժմ խիստ աննախանձելի է, անմիջական շրջապատողների իւր գէմ հանած գժութութեանց պատճառաւ: Յամենայն գէպս օրթոգոքս Բոլղարիայի համար անցեալ թուականը նշանաւոր եղաւ Բորիս իշխանորդու օրթոգոքս մըլկըրտուելով: որովսկիցը դրուեցաւ մի դաւանակից ժառանգական տան՝ իշխանական գահի համար, և բարեկամական յարաբերութիւններ հաստատուեցան օրթոգոքսութեան մեծ պաշտպան Ռուսաստանի հետ:

Ռուսաց եկեղեցուն գալով՝ ամենակարեղոր և իւր շուրջի ներքոյ մնացած ամեն ինչ ծածկող գեպքն է այստեղ նոցին Կայսերական Մեծութեանց սրբ: Թագավարութեան հանդէսը, որ մասնաւոր ուշադրութեան առարկայ էր մանաւանդ լուսաւորեալ ւրուպայի համար, որովհետև մինչ այնտեղ գարերէ ի վեր քաղաքական գործիչներն ամեն կերպ աշխատում են եկեղեցին անջատել պետութիւնից: այստեղ կրկին մի անգամ բոլոր պայծառութեամբ հանդէս էր գալիս եկեղեցւոյ և պետութեան մէջ եղած սերտ կապը, և մինչ միւս բոլոր թագակիրները քաղաքագիտական տեսութեանց և ժողովրդական իրաւանց վերայ են հիմնում իրենց իշխանութիւնը՝ Ռուսաց մեծազգը եկեղեցական օծումնելով ցոյց տուաւ, որ ամեն օրէնք և իշխանութիւն ի վերուստ եկած է համարուում և աստուածային ցուցման համաձայն ընթանալ է ուխտում: Խոդինսկից դաշտի մեծ աղէտը փոքր ինչնուեմացրեց այդ մեծ հանդէսի շուրջը, բայց դորա փոխարէն Կայսերական Զոյգի ճանապարհորդութիւնը Եւրոպայում մեծապէս նպաստեց Ռուսաստանի քաղաքական փառքն աւելացնելու, որից օգտուել աշխատեց նաև Օրթոգոքս եկեղեցին, զօրացընելու համար իւր ազդեցութիւնը թէ երկրի ներսը և թէ գուրսը:

Հետզետէ աճող և ծիւզաւորող աղանդների գէմ մաքառելու, ինչպէս նաև գուրսը հեթանու աշխարհում կամ երկրի ներսը բնակող զանազան ոչ քրիստոնեայ ազգերի մէջ օրթոգոքս գաւառնութիւն տարածելու համար, կրկին ծրագիրներ կազմուեցան և նորանոր ձեռնարկութիւններ եղան, բայց նոցա արդինքը գեռ ապագայրայից պէտք է սպասել: Առ հասարակ եկեղեցական՝ կրօ-

նական կենաքի մէջ տարուայ ընթացքում առանձին կարենոր շարժումներ չեն եղել, եթէ չհաջուենք ս. Թէսպոս Զերնիգովսկու սրբացման և Նշանակի փոխադրութեան առթիւ տեղի ունեցած տօնակատարութիւններն ու բազմաժողով հանդէմները.—Տառապեալ հայերին օգնելու համար Խօհանն Կրօնշտագմսկու պես մի հեղինակաւոր անձն պայծառ օրինակ հանդիսացաւ և յորդորներ կարգաց բայց հետեւողներ քիչ ունեցաւ:

Անգլիկան եկեղեցին, Անգլիայի և Ամերիկայի  
միւս բողոքական եկեղեցիների հետ մէկտեղ՝ զլսա-  
որ պաշտպանն էր և ինամողը հալածանքից և քաղ-  
ցից տառապող տաճկահայերի, թէ էլ հետզիւտէ ու-  
րիշներն ես հանդէս եկան, ինչպէս փարբիկ Զուրի-  
ցիրեան, որ իւր գովիլի նախանձախնդրութեամբ գրե-  
թէ բոլորին գերազանցեց, և բողոքական Գերմանիան,  
որ վերջերս կարելի է ասել մեծ եռանդ է ցոյց տալիս :  
Սակայն Նախաճեռնութեան պատիւը մնում է միշտ  
քրիստոնեայ անգլիացիներին, և եթէ նոցա սկսած  
անկեղծ մարդասիրութեան գործի մէջ կողմնակի  
հաշիւ խառնողներ ևս գտնուել են, անուրանալի է  
այնուամենայնիւ, որ տասնեակ և տասնեակ հազա-  
րաւոր խեղճեր նոցա են պարտական, նոցա ազնիւ  
ջանքերին և ազգու հրաւերներին՝ իրենց կեանքի, ի-  
րենց թշուառ որբերի պահպանութիւնը, և որ առա-  
ւել նոցա շնորհիւ մինչև աշխարհի ծայրերը հասաւ  
հայի անծայր թշուառութեան լուրը և մինչև իսկ  
հեթանոս գեղնամօրթ Ճափնացիների գութը շար-  
ժեց, \*—Անգլիկան եկեղեցին այս տարեցրանում  
մի մեծ կորուստ ունեցաւ յանձին իւր եպիսկոպո-  
սապես Դր. Բէնսոնի, որի փոխարէն ԱԷնտրըքիի  
արքեպիսկոպոսութեան աթոռը ժառանքեց Դր.  
Տէմալլ :

Բողոքական աշխարհի համար եկեղեցական—  
կրօնական կեանքի զլիսաւոր հոսանքը յառաջ մղողն  
այժմ ևս նոյն Գերմանիան է, որ սկզբից բողոքակա-  
նութեան մայր երկիրն է եղել: Այստեղ են քրիստո-  
նական գիտութեան զլիսաւոր ներկայացուցիչները,  
այստեղ և ամենից աւելի շփումն ու մրցումն է  
տեղի ունենում: Քրիստոնէութեան ու ժամանակա-  
կից քաղաքակրթութեան մէջ, յառաջ են գալիս և  
լուծուում են իսպիրներ, որոնք նշանակութիւն ու-  
նին ամբողջ քրիստոնէական աշխարհի համար: —  
Այսպիսի առաջնակարգ ինտիբոններ են ներկայում և  
կենդանի հետաքրքրութեան առարկայ եղան մանա-  
ւանդ վերջին տարին հետեւեալ երկուուր. ա) Թէ  
ինչպէս պէտք է վերաբերուել գեպի այն ուղղու-  
թիւնը, որ հետզհետէ աւելի ընդարձակ տեղ ըստ-  
ներով ատուածարանական դիտութեան: մէջ՝ ճպառ-

**•** Խաղպէս մի արտասահմանաւան թթվուում կարդում  
ենք, այստեղ ուս մի յանձնաժողով է կազմուել Հանրէ  
օգտին ու արդէն մի բանի հազար ֆրանկ ժողովուել է:

է ամեն ինչ պատմական քննադատութեան ենթարկել և նոյն քննադատական ոգւով կրթել ապագայ եկեղեցականներին. ը) թէ ինչ չափով քրիստոնէական եկեղեցին, յատկապէս եկեղեցւոյ պաշտօնեան երբ մասնակցութիւն կարող են ունենալ և իրենց ազգեցութիւնը գործ դնել համայնական (սոցիալական) խնդրի լուծումը վուժացնելու և դէպի բարին ու զղելու համար — Առաջին խնդրի նկատմամբ պահպանողական տարրը, որ իւր ներկայացուցիչներն ունի աւելի բարձր եկեղեցականութեան մէջ, աշխատում է ամեն կերպ կասկած ելի կացուցանել քննադատական դպրոցը զեկավարող ուսուցչապետներին, նոցա ամեն մի շարժ ման մէջ անհաւատութեան նշաններ ցոյց տալ և նոցա աղքեցութիւնից յառաջ եկած վտանգները մէծացնել. Ընդհակառակն փոխարէնը ուսուցչապետական ամբողջութիւնից վերայ վարչական և այլ կողմնակի միջոցներով պահպանողական անձանց թիւն է աւելացնում: Եկեղեցական համախմբութիւնների մէջ ամեն հնար գործ է դնում բարձր. կրթութիւնը ազատամիտների ձեռքից հանելու, Նոր պահպանողական դպրոցների հիմնելու կարևորութիւնը հաստատել, Սակայն ազատամիտ քննադատական դպրոցը չնայած այդ բոլոր ջանքերին անընդհատ յառաջ է գնում և աւելի ու աւելի համակրութիւն վաստակում երիտասարդ սերունդի մէջ, Պէտք է սպասել, որ այստեղ երկու հակառակ տարրեր հետզհետէ միմեանցից կանչատուին՝ բոլոր այն անձններ, որոնց համար հաւատն իրօք երկրորդական տեղ է բռնում: Օրոնք կամայականորէն խաղում են քննադատական մեթոդի հետ՝ իրենց խկական գոյնով կերպեան, և ասպարեզը կմնայ լուրջ հաւատացող քննադատներին, որոնց նպատակն է միայն գիտութիւնը աւետարանի ճշմարիտ ըմբռնման և եկեղեցւոյ շինութեան գործին ծառայեցնել և վերացնել այն նախապաշտումները, օրոնք արգել.ք են լինում ժամանակակից կրթութիւն ստացած մարդուն քրիստոնէական աշխարհայեցողութիւնը իւրացնելու: Երկրորդ խնդրի նկատմամբ արդիւնքն աւելի նշանաւոր էր և դրական: Վեհաժարանական — համայնական շարժումը որի մէջ սկզբից ի վեր երկու տարրեր հոսանքներ նշմարելի էին: Հների և նորերի, զրկուելով առաջնների մեծ մասի անդամակցութիւնից, որոնք շտէօկիկերի առաջնորդութեամբ մի առանձին կուսակցութիւն կազմակերպել են աշխատում՝ աւելի ազատութիւն և ընդարձակ ծաւալ ստացաւ: Պատոր նառաւմանն, որ այս շարժման պարագութիւնն է անցեալ տարի 1918 անունով մի շարաթամերթ է հիմնել և կարճ միջոցում մեծ յաջողութիւն ձեռքբերել. այժմ մի քանի ընկերակիցներով նա համարձակութիւն ունեցաւ, ու առաջնակարգ օրաթերթի հրատարակութիւնն սկսելու: Միաժամանակ, կրկին գլխաւորապէս նորա և ընկերների ջանքերով կազմաւեցաւ Ազգային—համայնականների մ

Նոր կուսակցութիւն, որ արդէն աւելի քաղաքական բնաւորութիւն է ստացել և երեկի շուտով կյածողէ Կայսեր. Խորհրդարանի (Reichstag) մէջ ևս իւր ներկայացուցիչներն ունենալ, Այսպիսով, մինչդեռ մինչև այժմ միայն պահպանողական կուսակցութիւնն էր, որ բողոքական եկեղեցւոյ շահերի պաշտպան էր համարուում Խորհրդարանում այսուհետև ազատամիտ—համայնական անդամներ ևս կլինին, որոնք գոնէ ընդհանուր քրիստոնէական գաղափարներով կառաջնորդուին: Կառավարութիւնը, որ սովոր է եղել պատորներին միշտ հլու հպատակներ տեսնել խիստ անհաշտ աշքով է նայում այս շարժման վերայ. բայց սա արագ քայլերով յառաջ է գնում՝ և թէպէտ շատերը երկիւղ են կրում: Որ հետքիտէ կորցնէ իւր քրիստոնէական բնաւորութիւնը, սակայն առ այժմ գոնէ ուղիղ ճանապարհով է ընթանում և մեծապէս նպաստում է Քրիստոսի անունը հնչեցնելու այնպիսի մարդոց ընդարձակ շրջաններում, որոնց համար ատելի և թշնամնելի էր դարձել այդ անուան հետ կապ ունեցող ամեն ինչ: Այլ և քրիստոնէական աշխարհայիշցողութիւնը, քրիստոարյականութիւնը իրբն իսկական առաջնորդ ներկայացնելու այն ինդիրի լուծման մէջ, որ մօտիկ ապագայի վերայ իշխող ամենակարեւոր և ամենակենսական ինդիրը պէտք է համարուի:

## ՀԱՅԵՍՏԱՆՈՒՄ ՏԱՐԱՊԱՆՆՔՆԵՐՆ ԱՄՈՒԲԵԼՈՒ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՂ, ԳԱՅԵՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ԶԱՐՈՒՌԴ ՀԱՄԱԾՈՂ. ՅԱ. Հ.

15 ԵՎ 14 յունիւարի 1897 ամի թարմնում. \*

Հօտ հրաւիրի Հռենոսսեան—Վեստֆալիան օգնող մասնաժողովի և Գերմանական օգնող գաշնակցութեան Քրանկիփուրտի յանձնաժողովի՝ յունուարի 13-ին և 14-ին Բարմէն էին ժողովուել հայոց գործի բազմաթիւ բարեկամներ Քրանկիփուրտից, Բեռլինից, Հռենոսսի երկրներից, Վեստֆալիայից, Հանովէրից, Սաքսոնիա նահանգից, Նասաուից և Էլզասից, որպէս զի Խորհրդակցեն Գերմանական օգնող գաշնակցութեան տան կազմակերպութեան մասին: Չուրիցերիս յանձնաժողովներն էլ ունէին իւրեանց ներկայացուցիչը յանձնի ժենեւիցի Ակոպովդ Քաւրի, Հրապարակաւ Խորհրդատութիւններ տեղի ունեցան Բարմէնի աւետարանական ընկերութեան տան դաշինում: Որ լի էր մեծաքանակ բազմութեամբ, Այստեղ Քրանկիփուրտից Լոհման պաստոր Քահանան և Բեռլինից պաստոր գոկտոր Լեպիտուս տեղեկութիւն տուին Քրանկիփուրտի և Բեռլինի կենտրոնական յանձնաժողովների գործունեութեան մասին: Բիզունորդից (Սաքսոնիա նահան-

գում) պաստօր Ցելլերը, Բիլեֆելդից պաստօր Զիբովլ և Կայզերսվերմիից պաստօր Դիսսելզօֆֆի խօսեցին Հայաստանի օգնութեան գործի կազմակերպութեան մասին, այլ և այն մասին, թէ ինչ սկզբունքը ներով են զեկալարուում օգնութեան գործակիցները:

Կազմակերպութեան և աշխատութեան մասին խորհրդակցելուց յետոյ հետևեալ որոշումները եղան:

## I. ՕԳՆՈՂ, ԳԱՅԵՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿՑՈՒԹԻՒՆԸ.

«Գերմանական օգնող գաշնակցութիւնը Հայաստանում տառապանքն ամրելու» մի միացեալ ընկերութիւն է, կազմուած ինքնուրոյն գործող յանձնաժողովներից, որոնք իրենց ձեռքն են առել Հայ ժողովրդին օգնելու գործը:

Մինչև ցարդ այս միացեալ ընկերութեան պատկանում են Քրանկիփուրտի կենդրունական յանձնաժողովը (որի նախագահն է Լոհման քահանան Քրանկիփուրտում Մայնի վրայ) իւր երկու մասնաժողովներով, Բեռլինի կենդրունական յանձնաժողովը (որի նախագահն է զրաֆ Բեռնատօրի, քարտուղարը գոկտոր Լեպիտուս Բեռլինում) իւր երկու մասնաժողովներով, այն է Վեստֆալիան (պաստօր Զիբովլ Բիլեֆելդում) և Կայզերսվերմի (պաստօր Դիսսելզօֆֆ): Որ մայր է արեւելեան ևսարկաւագուներից:

Զանազան ինքնուրոյն յանձնաժողովներն ընդունում են այսուհետև միացեալ ընկերութեան անունը, մասնաւորապէս աւելացնելով՝ Քրանկիփուրտի, Բեռլինի, Բիլեֆելդի և այլն: Նոր կազմուելիք յանձնաժողովներից, այն է Վեստֆալիան (պաստօր Զիբովլ Բիլեֆելդում) և Կայզերսվերմի (պաստօր Դիսսելզօֆֆ): Որ մայր է արեւելեան ևսարկաւագուներից որբանոցներից:

Զանազան ինքնուրոյն յանձնաժողովներն ընդունում են այսուհետև միացեալ ընկերութեան անունը, մասնաւորապէս աւելացնելով՝ Քրանկիփուրտի, Բեռլինի, Բիլեֆելդի և այլն: Նոր կազմուելիք յանձնաժողովներից, այն է Վեստֆալիան (պաստօր Զիբովլ Բիլեֆելդում) և Կայզերսվերմի (պաստօր Դիսսելզօֆֆ): Որ մայր է արեւելեան ևսարկաւագուներից:

Անկախ գործող յանձնաժողովները կուղարկեն մի երեսնկիսան, ընդհանութեամբ խորհութեալ ինքնիրների մասին մի ընդհանուր մասնաժողով կազմելու:

Օգնող գաշնակցութեան ապագայ համաժողովներ կհրաւիրէ ընդհանուր մասնաժողովը, որ ժամանակ առ ժամանակ ընդհանուր զեկուցումներ կհրատարակէ:

## 2. ՀՐԱՎԱՐԻ ԳԱՅԵՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԴՅՈՒՆՈՒՅՆԵՐԸ.

Գերմանական օգնող գաշնակցութեան չորրորդ համաժողովը յայտնում է իւր կատարեալ վատահութիւնը թէ Ֆիշ և արժանահաւատ են Հայաստանի տառապանքների մասին Հրատարակուած այն տեղեկութիւնները, որ Հայորդեցին Հայաստանի գերմանացի բարեկամները, նաև Համարում է, որ աւետարանական Գերմանիոյ պարտքն է իւր բոլոր ուժերը լարել տառապանքների առաջն առնելու, յայտնում է այն տղամարդկանց և կանանց, որ ցարդ Գերմանիայում օգնութեան գործի համար

աշխատեցին։ Իւր չնորհակալիքը և գնահատում է նոցա վաստակը, այլև սպասում է պետական և եւ կեղեցական պաշտօնեաներից, որ նորա գետի այսպիսի, քաղաքական միտումներից բռնորովին զերծ, սիրոյ մի գործ բարեհաճ կլինին և չեն զլանայ նորա յաջողութեան նպաստելու։

## Յ. ՈՐԲԵՐԻ ԽՆԱՄԱԾԱՐՈՒԹԻՒՆԸ.

Ի նկատ առնելով՝ թէ որպիսի դժուարութիւններ կան և որչափ երկրայելի է շատ հայ որբեր Գերմանիա բերելը, և համոզուած լինելով, որ 200 մինչև 300.000 որբ պահպանել և կրթել ամենից աւելի հնարաւոր է, ապահով և արժան, եթէ նոյն իսկ Հայաստանում, տակաւին այնտեղ մնացած ընտանիքների մէջ, տեղաւորութիւն, արգէն այնաեղ եղած և հիմնուելիք հիմնարկութեանց մէջ ինամուին կամ ցերեկօմիկ զպրոցներում ընդունուին և սովորեն, գտնուած կամ նոր ուղարկելիք Եւրոպացիների հսկողութեան ներքոյ—այս ժողովը միաձայն յայտնում է, թէ բոլորովին համաձայն է Հայաստանի գերմանական օգնող դաշնակցութեան, որ այս ճանապարհն է ընտրել, և սրտագին հրաւեր է կարդում Գերմանիոյ քրիստոնեաներին առատ տուրքերով օգնող դաշնակցութեան այս ողորմութեան գործին օժանդակել։

Այլէ ժողովը յայտնում իւր չնորհակալիքը արևելքի սարկաւագուհիների հիմնարկութեանց և Նրուսալէմի ասորական (սիւրիական) որբանոցին և գնահատում է նոցա եռանդուն մասնակցութիւնը հայերին օգնելու գործին։

Պաստոր Լ.օհմաննի, դոկտոր Լեպսիուսի պատոր Դիսուէլօֆփի և պաստոր Զիրոլդի ընդհանուր զեկուցումներից և Հաղորդած տեղեկութիւններից երեաց, որ օգնող դաշնակցութեան գործունէութիւնը Գերմանիոյ աւետարանական եկեղեցում մեծ արձագանք և պաշտպանութիւն է գտել, Կարելի է ասել, որ աւետարանական եկեղեցին առանց կուսակցութեանց խորութեան՝ միարան ինչպէս մի մարդ հայ ազգի նեղութեանց առաջ առնելու համար կանգնելու պատրաստ է։ Քրանկիվուրտում և Քեռլինում այժմ կենցրունական յանձնաժողովների կից կան և տեղական, գաւառական կազմակերպութիւններ օգնութեան գործի համար զրօրոք։ Հաւենոսի նահանգներում։ Վեստֆալիայում, Հեսուսկենում, Նասսաուում։ Հաննովերում։ Շլեզվիդ—Հոլշտայնում։ Սաքսոնիայում։ Պոմմերանիայում։ Շլեզվիայում։ Օլքենբուրգում։ Լիպպեում։ Բրաունշվայգում։ Անհալտում։ Համբուրգում։ Բրեմենում։ Ալերտամբերգում։ Հեսսեն—Գարմշտադում։ Ֆալցում։ Բադենում և Էլ-

զաս—Լոթարինգիայում։ Մինչեւ ցարդ երկրորդական յանձնաժողովների օգնութեամբ հաւաքուել է	
Քրանկիվուրտում	212.000 մարկ
Բեռլինում	239.000 *
Կայզերսվերթում	150.000 *
Բիլեֆելդում	30.000 *

631.000 մարկ։

Երբ նորհենք, որ այստեղ կէս միլիոն մարդկանց տառապանցն ամսգելու և մի քանի հարիւր հազար այրիներ և որբեր պահելու գործ կայ, և որ զօր փոքրիկ Զուլիցերիան միայն համարեա 6'0.000 Քրանկ է ժողովել, այն ժամանակ մենք չենք կարող դահ լինել Գերմանիայում հաւաքած գումարով։

Ժողովուած նպաստները ցարդ գործ են ածուել սովոր մեղմացնելու և որբեր պահպանելու համար։ Մինչդեռ Անգլիացիք և Ամերիկացիք հոգում են Կալնոյ, Քիթլինի, Վանայ, Դիարբեքիրի նահանգների, և Զուլիցերիոյ յանձնաժողովները Սուազի վիլայէթի մասին։ Գերմանիան իւր օգնութեամբ ամենից առաջնորդին և Հալէպին է նուիրում։ Որոնց միջազգային յանձնաժողովների միջոցով Տիշդ 180.000 մարկ է յանձնուած անհրաժեշտ կարիքները մասամբ մեղմացնելու։ Այժմ ամենամեծ նեղութիւն է Կարպերդի նահանգում։ ուր մի քանի շրջաններում արդէն քաղցից տիֆ է յառաջացել և առնուազն 43.000 մարդ կայ, որոնցից 20.000 որը և 15.000 այրի են և միայն դրասից եկած օգնութեամբ կարող են սովոր միահանգներից ազատուիլ։ Միայն այս նահանգում ինչպէս որ հիմնական քննութիւնից և մանրազնին տեղեկագիրներից երեւում է, առնուազն անհրաժեշտ է մի միլիոն մարկ, որպէսզի կոտորածից զերծ մնացած ժողովրդին կարելի լինի մահուանից ազատել։

Որբերի մասին ցարդ Գերմանիոյ կողմից հետեւել հոգատարութիւնն է եղել։

Գերմանական օգնող դաշնակցութիւնը Հայաստանի ներսը 7 կայարաններում, այդ նպատակով նորա տրամադրութեան ներքոյ գրած և կամ վարձած աների, մասամբ և հայ ընտանիքների մէջ մօտ 500 որը է ժողովել։ շարունակ խնամք է տանում։

Այդպերսպէքթ որբանոցը տեղաւորել է 116 որը Զմիւնիայում։ Քերութեամբ և Նրուսաղէմում։ ասորական (սիւրիական) որբանոցը 50 որը Նրուսաղէմում, Նրուսաղէմի ընկերութիւնը 20 որը Քեթզեհէմում։ վերջին երկու հաստատութեանց իւրաքանչիւրին Քեռլինի կենդրոնական յանձնաժողովը 5000 մարկ է յանձնել։ որ իրենց ջանքերն արդիւառուին, Ապա Քեռլինում ձեռնարկուած է Ռումանիա և Բուլղարիա ուղարկուած պատոր Ամիր խան եանց ցի միջոցով Բալկան փախած հայերին օգնելու։ այլև պատրաստուում է օժանգա

կութիւն մօն 10,000 հայ և տառապեալ պանդուխտների համար որոնք Տաճկաստանի սահմանին կից Պարսկաստանի հողումն են այժմ և նեղութեան մէջ են Բացի այդ Պրանկփուրտի և Բելլնի յանձնաժողովները կուղարեն Հայաստան գերմանացի կանայք, մանաւանդ բժիշկներ:

Պատոր Լոհմաննի և պատոր Լեպսիուսի ինչպէս և հետեւալ բանախօսութեանց մասին եղած խօսակցութիւններից երևաց, որ բոլորը միաբան են հայ քրիստոնեաների հալած մանց պատճառների, ինչպէս և տառապանքների առաջն առնելու եղանակի նկատմամբ։ Բանախօսութիւններն էին. «Ի՞նչպէս կարող ենք ամենալաւ կերպով Հայաստանում սովոր առաջն առնել» (պատոր Զելլէր). «Հայաստանում քրիստոնեաների հալած անք է թէ ոչ» (պատոր Լից. Անդրէր). «Ի՞նչպէս պէտք է 20,000—30,000 հայ որբերին խնամել» (պատոր Զիրոլդ), և «Աւելտարանական միսսիան Արևելքում» (պատոր Դիսելչօֆֆ)։

Երկօրեայ բանավարութիւնից յետոյ երևաց, որ հետեւալ հիմունքներով պիտի զեկալարուին.

1. Խթէ մենք արդիւնաւէս կերպով մրցիլ ենք կամենում Հայաստանի սովոր առաջն առնելու համար, պէտք է ամենից առաջ պահանջնեք, որ վերջապէս այժմ հայոց չարչարանքները դադարեն, և մի կերպ խաղաղութիւն հաստատուի փորձանքի ենթարկուած նահանգներում։ Մեր գործը Դանաւ յեան 1 ապարդիւն աշխատութիւն կլինի, եթէ մենք այս խնդրում ոչինչ ձեռք ըստերենք։

2. Մեր օգնութեան գործում պէտք է առաջնորդուինք այն սկզբունքով, որ վհատուած բայց կենունակ և փութաջան հայ ժողովուրդին ինքնազնութեան միջցներ տրուին։

3. Աւստի մեր ջանքերն սկզբունքով պէտք է ուղղուած լինին ոչ այլքան առանձին տառապեալների, ուրեմն առանձին առանձին որբերի՝ իրենց նեղ վիճակից ազատելու, այլ աւելի հայ ազգի ընդհանրութեան օգնելու, Տառապանքի դէմ պէտք է կռուենք նոյն խէկ տառապեալ երկրում որպէսզի այս հին քրիստոնեայ ժողովուրդը իւր բնիկ երկրում կենդանի մնայ։

4. Բացի սովեալներին և ցրտատարներին մնընդիւն կարևոր միջցներ, զգեստներ և անկողմններ հայթայթելուց կարևոր է թշուառացած գաւառներում օգնել մարդկանց, որ իրենց աւերակ դարձած տեսքը նորոգեն։ Սերմացու և գործիւներ պէտք է ձեռք բերել և արհեստադիտական ձեռնարկութիւններով աշխատանքի միջոց տալ։ Օգնու-

թեան այս գործը պէտք է ղեկավարեն և սորա վերայ հսկեն Եւրոպացի տղամարդիկ և կանայք։

5. Մեր գերմանական օգնող գաշնակցութեան համար արդէն ճանապարհը ցոյց է տրուած, միքանի կենդրունական կայարաններում, ուր արդէն որբեր են ընդունուած, պէտք է բաւական մտուզ գերմանացի գործիւններ նշանակել և այն տեղերից սկսել շրջակայ գաւառներում գործել։

6. Կ. որովհետև Թուրքից սահմանակից երկրներում ևս փախտականների մէջ սով է տիրում, ուստի այս տառապեալներն էլ օգնող գաշնակցութեան պաշտպանութեան կարօտ են։

7. Օգնութիւնը պէտք է արագահաս լինի,

Համաժողովի երկօրեայ թանավարութիւնից յետոյ յունուարի 13-ին երեկոյեան Բարմէնի և Ալբրեդէնի հինգ զանազան եկեղեցիններում և զահինձներում միաժամանակ եկեղեցական համախմբութիւններ տեղի ունեցան, ուր 8000—10000 արտակարդ բաղմութեան առաջ ումանք խօսեցին հայ ժողովրդի տառապանքի և աւելտարանական եկեղեցու պարտականութեան մասին, այդ կարիքի դէմ օգնութեան ձեռք կարկառելու։ Յունուարի 14-ին ճաշից յետոյ պատոր Լոհման կանանցից մի ժողով կազմեց աւելտարանական ընկերութեան ընդարձակ գահինձնում, ուր ասեղ ձգելու տեղ չկար և ուր նա մի զեկուցումն տուեց Հայաստանին օգնող կանանց զաշնակցութեան մասին։

Համաժողովի բոլոր մանակցողները երկօրեայ իրախուսական բանավարութիւնից յետոյ հեռացան Վուպէրի հովանից այն համոզմամբ, որ օգնող գաշնակցութեան և հայոց գործի բարեկամների շնորհիւ աւելտարանական եկեղեցու բոլոր մասերում խսպա խզուած է այն կապանքը, որ ցարդ պղտոր աղբիւներից օգտուող մամուլի շնորհիւ կաշկանդում էր Գերմանիոյ հասարակական կարծիքը։

↔↔↔

ՏԱՐԻՆ ԿԲ ՎԵՅ ՉԱՅՆ ԵՐԳԵՅՈՂՈՒԹԻՒՆ

### ՊԱՏԱՐԱԳԻ.

Բերլինի Singakademie-ի (երաժշտական միհաստառութիւն է, ուր երգեցողական երեկոյթներ են լինում, ունի իւր յատուկ երկսեռ երգեցիկ խումբը) տեսուչ Բլումների (Professor Dr. Martin Blümner) զեկավարութեամբ տասն և երեքերորդ անգամ երգուեցաւ Գրէլլի (Eduard Grell) յօրինած տասն և վեց ձայն պատարագը, Այս երկը յայտնի է երաժշտական աշխարհին Missa solemnis für 16 Stimmen անունով, երկու շաբաթ առաջ լրագրերի և սիւների վերայ կացրած յայտարարութիւններով հասարակութեան սեղեկութիւն էր տրուած, կարծ ժամանակում բոլոր տամսերը գնուեցան։ Singakademie-ի եռայարկ հանդիսարահը լի էր հասարակութեան երկսեռ ընտիր գասակարգով։

1. Նգիպտոսիք փախած Արգոսի թագաւոր Դանայոսի զուտառներն իրենց ամսանքներն սպաննելու պատճառով զատապարտուած էին յափունան Սանդարամտում ըստ Ծցնել մի ծակոտուած տակառ Դանայան աշխատութիւն։

Պատարագը գրուած է 16 մարգու ձայնի համար: առանց նուազածութեան մասնակցութեան, մէջ ընդ մէջ բարեխառնած 1—16 ձայն երկուու խմբակներով (solo): Պատարագը բովանդակում է եօնն կոտր. Խօսքերը լատիներէն պատարագամատցիցն են առած:

1. Kirie eleison (Տէր ողորմեա).—2. Kriste eleison (Քրիստոս ողորմեա).—3. Kirie eleison.—4. Gloria in excelsis Deo (Փառք ի բարձունաւ մինչև Եւրամենայն ժամ-ը).—5. Credo in unum Deum (Հաւատամբ ի մի Ռատուած).—6. Sanctus, Sanctus, Sanctus (Սուրբ, Սուրբ, Սուրբ).—7. Agnus Dei (Գառն Ռատուածոյ).

Գէօդէն երաժշտութիւնը համարում է մարդու համար եղակի, աստուածապարզեւ ընորհ: Յիշրաքի Missa Solemnis-ը իւր սրտառուղիւ, զեղուն, վեհաշունչ քաջածայն ներդաշնակութեամբ ամենափայլուն կերպով արդարացնում է այդ գաղափարը: Այն ամենը, ինչ որ գեղեցիկ է և հրաշազան երկրին վերայ, միացնում է կարծես իւր մէջ երաժշտական այս զօրաւոր երկը ազատ գեղգեղակներով վեր տանելու, երինայինի հետ զուգորդելու համար:

Երեք տէրողորմեաները սկսուում են մնջմիկ միայնակ երգեցողութեամբ, որ մերթ ընդ մերթ բարեխառնում է ամրող խումբը:

Խնչպիսի վեհագոյն, հիմաքանչ վայելչութեամբ վեր է սլանում ապա «Փառք ի բարձունաւ. ինչպիսի երկիւղածութեամբ և յուսով թրթուում է քրիստոնէի սիրաը, երբ «Հաւատամբ»-ի «Հարշարեալ, խաչեալ, թաղեալ» խորախորհութեամբ խօսքերը տիրայոյդ ալիքներով պատում են նորան, ինչպիսի զուարթութեամբ և բաւականութեամբ լցուում է հոգին և ինքնարեր ուրախառիթ ժաղիս է ցոլում գէմքի վերայ, երբ լսում է յարութեան փողը:

Բայց հայ մարդու ուրախութիւնն աւելանում է և կուրքը վրուում է արդար հպարտութեամբ, երբ լ լ է «Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր զօրութեալց պովիքեական փառարանութիւնը. նա մոռանում է րոլոր նախին տպաւորութիւնները՝ առ ժամանակի, առանց զդալու թէ ի՞նչ է կատարուում իւր շուրջը, տեղափոխուում է հոգեալու հաստահիւն, անսասան և ուսոյ Մօր՝ Մայր ամոռ. Ա. Էջմիածնի սրբազն կամարների տակ, և լսում հայ քրիստոնէի երգած «Սւրբ, Սուրբ, Սուրբ» . . . և հրեշտականուագ մեղեգին ազդային ներդաշնակութեամբ, հաւատակիցների երգակցութեամբ միայն իսկապէս վերացնում է նորան, շատ բարձր, Ամենակալի, Աթոռի առաջ հանում, կապելով նաև նորահամար երկներն ու երկիրը:

Ովաննա ի բարձունաւ:

Կոմի. Վ.

## Ա Մ Ե Ր Ի Կ Ա.

ՄԻԱՆԱՆԱՐԵՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՐԻ ԹԻՒՆԵՐ ԱԱՃԱԱՍՑՈՒՆԵՐ \*

Ա. Պօլսից ստացուած տեղեկութիւնների համաձայն Հայոց պատրիարքարանին գանգատներ են համառում Տաճկաստանի և Հայաստանի զանազան կողմերից, այն եղանակի նկատմամբ, որ գործ են դնում ամերիկական միսիոնարները կոտորածների գոհ թշուառ հայերին օգնելու համար Ամերիկայից ուղարկուած հայտնի է, որ միսիոնարները օգուտ են քաղուամ հայ քրիստոնեանների թշուառութիւնից, նիւթական օժանդակութեանց միջցոց ստիպելով նոցա բողոքականութիւնը ընդունելու, նպաստները առանց անկողմանական գոհների մէջ բաշխուում, այլ տարբերութիւն է դրուում իրենց գարձրած բողոքականների և Հայոց հին առաքելական եկեղեցուն պատկանողների մէջ, Այսպիսով նորա որոնք դանկանում են մասնակից լինել Ամերիկայից ուղարկուած օժանդակութեան բարիքներին, ստիպուած են բողոքական գառնայ, կամ գոնէ ձևանալ, որպէս զի հաճելի լինին միսիոնարներին: Այդ յիրաւի մի ծանր մեղաղրութիւն է միսիոնարների գէմ, բայց որքեր նոցա ի մօտոյ ճանաչել են կամ տեղեակ են նոցա գործունեկութեան եղանակին, զարմանալու ոչինչ չեն ունենայ, ուրիշ կերպ սպասել նոցանից գժուար էր: Նոյնն արին նորա տարիներ առաջ մի ուրիշ առթիւ՝ մինչ տիրում էր 1878 թ.-ի սովոր: Սակայն մեր զայրոյթն այժմ աւելի մեծ է, քանի որ արդ եղանակը նորա գործ են զնում այնպիսի մի ժամանակ, երբ հայերը զոհ են ոչ թէ բնական արհաւիրքների, այլ կրօնական հալածանքի՝ Յիսուս Քրիստոսի անուան համար: Ուրախ եմ իմանալով, որ Օրմանեան պատրիարքը, Տաճկաստանի Հայոց եկեղեցական և քաղաքական գլուխը ուշադրութեան է առել անյապաղ այդ գանգատները և վճռել է ձեռք առնել կրին նպաստների բաշխման գործը, որ անպիսի արիութեամբ յառաջ էր տարել նախկին Խղմիլը եան պատրիարքը և իւր յանկարծակի հրաժարմամբ անցեալ օգոստոսին ընդհատելու ստիպուել: Խղմիլը եան պատրիարքը ժողովից և բաժանեց աւելի քան 100,000 դլ. առանց անտեղի փողահարութեան և աղմկափ ցոյցերի, Յուսուսի է, որ նոյնն անէ նաև Օրմանեան պատրիարքը՝ նշնչպիսի յաջողութեամբ: Ամօթ և նախատինք է, որ միսիոնարները օգուտ են քաղում մի համազգային գժարադրութիւնից, իրենց դաւանափանների ցանկը մեծացնելու, Զափից աւելի ձգուումն և եռանդ ցոյց տալով՝ տարածելու իրենց աղդեցութիւնը հայ ժողովրդի որչափ կարելի է աւելի մեծ մասի վերայ, նորա այժմ աւելի ատելի են գարձնում իրենց հայերի աչքում քան երբ և իցէ: Հայրս անցեալ շարաթ մի ինդիր ստացաւ էվերիկի թաղական խորհրդից, ուր տեղի է

\* The Sun. 24 յունուար 1897. հազ. Ար. Վարդպետեան:

ունեցել բազմաթիւ կոտորածներից վերջինը հոկտեմբերին առաջ տեղական աւագ քահանայի և պատուաւոր անձանց ստորագրութեամբ, որով աղերսում են՝ «Միջնորդել մարդասեր ամերիկացի ժողովրդեան առաջ» ։ Նոցա համար, որպէս զի կոտորածի և հրդեհի գոյներին՝ նոցա թշուառ վիճակն ամփելու նպատակաւ եղած օգնութիւնը ուղղակի ճանապարհներով տրուի ։ Այն հանգամանքը, որ նոցա անմիջապէս տեղական միսիոնարներին չեն դիմել, որոնք պատրաստի գումար ունին իրենց տրամադրութեան ներքոյ՝ շատ բան է նշանակում: Հայերը իսկոտ կրօնասեր ժողովուրդ են, սերտ կերպով կապուած իրենց նախնական եկեղեցու հետ, որի համար հազարաւորներ գերադասել են զրկուել կեանքից, երբ նոցա առաջարկում էին ընտրել իսլամ կամ մահ, նոցա խիզճն ու կրօնական զգացումները այնչափ քնքոյց են, որ շատերը պատրաստ են աւելի շուտ սովամահ լինել, քան միսիոնարներից օգնութիւն ստանալ այն ձեռվ, ինչպէս մինչև այժմ տրուել է: Միսիոնարներն իրաւոնք չունին նպաստի գումարները իրենց միսիոնի գործը յառաջ տանելու համար ծախսել, Այդ գումարները ժողովուել են մարդասեր ամերիկացիների տուրքերով, որոնք խզծում են նահատակ հայերին և զուտ մարդասիրական զգացումներով են տալիս իրենց դրամը: Դրամը յանձնուած է միսիոնարներին բաժանելու համար տնանկացած հայերին, առանց կրօնի խտրութեան, Միսիոնարներն իրաւոնք չունին գործ գնել գումարները իրենց հաճոյից կամ շահուց համաձայն ևս մի գեպք գիտեմ: ուր 100 թթբական ոսկի նպաստ է տրուել մի մարդու, որի ընտանիքը ոչ մի անձնական զրկանք չէ կրել, այլ միայն տունն է կողոպտուել ընտանիքի բացակայութեան ժամանակ, Բայց նա բողոքական պաստոր էր, միսիոնարներին աշխատակից, ուստի և բացառական շնորհ ցցց տրուեցաւ նորան, թէ նա շարունակում է ստանալ իւր կանոնաւոր ոսմիկը Քօրդ Միսիոնից իրեն պաստոր, և համեմատած ուրիշների հետ ստիպողական կարիքներ չունի: Աւրեմն մի բազոքական պաստոր աւելի է ստանում, քան 400 ազգային եկեղեցուն պատկանող հայեր միասին:

Այս կողմնապահութեան նպատակը չէ միմէ հայերին դաւանափոխութեան հրավորել, որով միայն միսիոնարների շնորհը ձեռք կրերեն. Այն եղանակը, որով միսիոնարները նպաստի դրամները բաժանում են, կարծել է տալիս հայերին, թէ միսիոնի դրամ է այդ: Աւրախութեամբ կարող եմ յայտել, որ Օրմանեան պատրիարքը մի նպաստամտոյց յանձնախումբ է կազմել Կ. Պոլսոյ հայոց պատրիարքարանում: նպաստներ ժողովելու և բաժանելու տնանկացած հայերին՝ առանց դաւանութեան խտրութեան, Բոլորեքեան նորա, որոնք ցանկանում են հայերին մի իրական օգնութիւն ընձեռել, առանց

գաղտնի նպատակների և խարերայութեան, թողի իրենց տուրքերը պատրիարքարանի յանձնախմբին հասցնեն. Խրաբանչիւր այդ յանձնախմբին ուղարկուած գովար կհասնի ուղիղ իւր նպատակին: առանց հանելու միջից մեծ մեծ «ընդհանուր ծախքեր», «պաշտօնէից ոսմիկներ» և լուսարժիւր պատրիարքարանի յանձնախմբին:

Այս նամակի հեղինակ Պ. Արդուկեանը մի գիրք ևս գրել է, որի վերնագիրն է. Armenia's ordeal. A sketch of the main features of the history of Armenia; and an inside account of the work of the american missionaries among armenians, and its ruinous effect (Հայաստանի գատը. Մի ստուերազիծ Հայաստանի պատմութեան ինչ ինչ պարագաների, և ներքին հաշիւ ամերիկական միսիոնարների Հայոց մէջ կատարած գործի նկատմամբ ու գորա վնասակար հետևանքը): Նիւշ-Իորքի մի քանի թերթեր գովասանքով են խօսում այդ գրքի մասին: որի մէջ տեղ եակ գրչով նկարագրուած է ներկայ գարի սկզբից ի վեր մինչև մեր օրերը ամերիկական Քօրդ Ընկերութեան միսիոնարների գործունէութիւնը Հայաստանում: և եթէ, ասում է այդ թերթերից մէկը, պ. Արդուկեանի ասածների մի փոքր մասն անգամ ճշմարիտ է իսկապէս բոլորը կրում է ճշմարտութեան դրոշմ—ամերիկական միսիոնարների վարմունքին Հայաստանում ամեն անուն կարելի է տալ, բայց ոչ քրիստոնէական:

↔↔↔

Տաճկահայոց դատի անվեհեր պաշտպան գր. Լեպսիւս մի նոր ամսաթերթ է սկսել Հրատարակել Քերլինում Der Christliche Orient (Քրիստոնեայ Արեւելքը) անունով: Առաջին համարի բովանդակութիւնն է. Մի կոչ արևելքի քրիստոնեաների համար Լուսերի ժամանակից: Արարեկերի կոտորածը. Պարսկաստանի և արևել. Տաճկաստանի ասորիները. Քողոքական եկեղեցւոյ սկզբնաւորութիւնը Հայաստանում 1813—1850 թ. և լ.



\* Վեհին օրերս հրաժարուած է նա եւ տեղը Վեհափառ Հայրակետ՝ կարգադրութեամբ նուազու նշանակուած է Արժ. Մաշոց վարդ. Փափազնա, Արմազու Դաբեկանի սաները, որ այժմ ուուշութում է: